«ԷԴԻՏ ՊՐԻՆՏ» հրատարակչություն

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների բացահայտման գործընթացի կազմակերպման ձևերն և միջոցները երաժշտական և կերպարվեստային դիդակտիկ խաղերի ժամանակ

Հաստատություն՝ Ամենագետներ նախակրթարան

Դաստիարակ՝ Աննա Ադամյան

Ղեկավար՝ Ժաննա Ավետիսյան

Բովանդակություն

Ներածություն ---------- -2-
Գլուխ 1. Ներառական կրթությունը արդյունավետ դարձնելու

նպատակով երաժշտության դասաժամին կիրառվող

մանկավարժական տեխնոլոգիաները եւ մեթոդները ---------- -4-

Գլուխ 2. Ներառական կրթության առանձնահատկությունները

երաժշտության դասաժամին ---------- -6-
Եզրակացություններ ---------- -13-

Գրականության ցանկ ---------- -14-

Ներածություն

Ներառական կրթությունը կրթական այնպիսի ծրագիր է, որը բացառում է ամեն տեսակ խտրականություն երեխաների նկատմամբ, ապահովում է հավասար վերաբերմունք բոլոր մարդկանց հանդեպ, կրթական համակարգում ստեղծում է ուրույն պայմաններ առանձնահատուկ կրթական կարիքներ ունեցող անձանց համար:

Ներառական կրթությունը հանրակրթության զարգացման գործընթաց է, որը ենթադրում է կրթության մատչելիություն բոլորի համար, երեխաների ամենատարբեր կարիքների բավարարմանն ուղղված բոլոր տեսակի միջոցների ապահովում, ինչը հանրակրթական դպրոց մտնելու այցեքարտ է ընձեռնում հատուկ կարիքներ ունեցող երեխաներին:

Ներառական կրթությունը ձգտում է հասնել ուսուցման նկատմամբ առավել ճկուն մոտեցման՝ բավարարելու մարդկանց զանազան կրթական պահանջները: Եթե ներառական կրթության մտցրած փոփոխությունները ուսուցումն ավելի արդյունավետ դարձնեն, ապա կշահեն բոլոր երեխաները, այլ ոչ միայն առանձնահատուկ կրթության կարիքներ ունեցողները:

Ներառական կրթությունը ենթադրում է, որ աշակերտներն իրենց ողջ բազմազանությամբ ու յուրատեսակությամբ սովորում են կողք կողքի, նույն դպրոցում եւ դասարանում: Ներառական կրթությունը շատ բարձր է գնահատում ուսումնական գործընթացում յուրաքանչյուր աշակերտի ներդրումը: Սակայն այս սահմանումը, թերեւս, թաքցնում է կրթական ներառում երեւույթի բարդությունը: Ներառման սահմանումը ժամանակի ընթացքում փոփոխվել է, ինչի պատճառով ավելի է մեծացել պատշաճ ներդրումների, ռազմավարությունների եւ չափորոշիչների մշակման պահանջը: Առկա են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների սոցիալական եւ կրթական հմտությունների զարգացման բազմաթիվ խնդրահարույց հարցեր ու մարտահրավերներ, այդ թվում՝ ուսուցիչների կրթությունը եւ վերապատրաստումները, դպրոցների սոցիալական ու ֆիզիկական միջավայրի հարմարեցումները, ինչպես նաեւ ծնողների ակնկալիքները, մոտեցումները եւ պատկերացումները:

2005 թ. սեպտեմբերի 1-ին ուժի մեջ մտավ «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» ՀՀ օրենքը: Դրանով պետականորեն ճանաչվեց եւ ամրագրվեց նաեւ ներառական կրթությունը Հայաստանում:

ԿԱՊԿՈՒ անձանց կրթության մասին օրենքի ընդունումից 7 տարի անց ՀՀ Ազգային ժողովը հաստատեց հանրակրթության մասին օրենքում փոփոխություններ կատարելու օրենքի նախագիծը, որի համաձայն ՆԿ մասին օրենքը դառնալու է հանրակրթության օրենքի մի մասը՝ ըստ այդմ հանրակրթական համակարգը նախապատրաստելով համընդհանուր ներառականության, որը պլանավորված է կյանքի կոչել մինչեւ 2022թ:Այսօր Հայաստանը, ներառական կրթությունը դարձրել է պետական քաղաքականության կարեւոր մասը:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձ՝ անձ, որի ֆիզիկական և (կամ) մտավոր, հոգեկան զարգացման առանձնահատկությունները խոչընդոտում են կրթական ծրագրերի յուրացմանը՝ առանց կրթության առանձնահատուկ պայմանների.

կրթության առանձնահատուկ պայմաններ՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձի կրթության և ուսուցման կազմակերպման համար անհրաժեշտ հատուկ կրթական ծրագրեր և ուսուցման մեթոդներ, ուսուցման անհատական տեխնիկական միջոցներ, կենսագործունեության միջավայր, ինչպես նաև մանկավարժական, սոցիալական և այլ ծառայություններ, առանց որոնց կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց հանրակրթական և մասնագիտական կրթական ծրագրերի յուրացումը դժվար է կամ անհնարին.

հատուկ կրթական ծրագրեր՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձի համակողմանի զարգացմանը, նրա աշխարհայացքի ձևավորմանը, նախասիրություններին և կարողություններին համապատասխան կրթության յուրաքանչյուր մակարդակի բովանդակությունը, մասնագիտական ուղղվածության և անհրաժեշտ գիտելիքների ու հմտությունների ծավալը.

ներառական կրթություն՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության համար առանձնահատուկ պայմանների ապահովման միջոցով նրանց համատեղ ուսուցումը հանրակրթական և մասնագիտական ուսումնական հաստատություններում նման պայմանների կարիք չունեցող անձանց հետ.

հատուկ կրթական հաստատություն՝ կազմակերպություն, որը կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց համար իրականացնում է կրթական ծրագրեր՝ կրթության առանձնահատուկ պայմանների ապահովման միջոցով.

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատում

Երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումն իրականացվում է մանկավարժահոգեբանական գնահատման չափանիշներին համապատասխան: Այդ գործընթացը նախադպրոցական աստիճանում իրականացվում է ցանկացած տարիքում, երբ երեխայի մոտ դիտվում են նախադպրոցական ուսումնական գործընթացում մասնակցության և զարգացման կայուն դժվարություններ: Հաջորդ գնահատումն իրականացվում է ավագ խմբում, նաև այն դեպքում, եթե ուսումնառության ընթացքում կարիք է առաջանում ԿԶԱՊԿ-ի աստիճանի փոփոխության:

Ներառական կրթությունը՝ կրթություն է բոլորի համար:

Երբ կրթությունը ներառական է, ապա դրանից շահում են երեխան, ընտանիքը, պետությունը և հասարակությունը: Այն կրթության կազմակերպման գործընթաց է, որի հիմքում բոլոր երեխաների, այդ թվում նաև՝

հաշմանդամություն և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթություն ստանալու իրավունքն է: Այն արձագանքում է բոլոր սովորողների բազմազան կարիքներին, մեծացնում է նրանց մասնակցությունը ուսումնական, մշակութային և համայնքային կյանքին և նվազեցնում է կրթությունից նրանց դուրս մնալը: Ներառական կրթությունը ենթադրում է կրթական գործընթաց, որն ուղղված է բոլոր սովորողների կարիքներին, ներառյալ հաշմանդամություն և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներ, բռնությունների ենթարկվող երեխաներ, աշխատող երեխաներ, փախստական կամ տեղահանված երեխաներ, միգրանտներ, աղքատ և չքավոր երեխաներ, լեզվական փոքրամասնություններ, ազգային փոքրամասնություններ, հակամարտությունների հետևանքով որբացած երեխաներ և այլն:

Ներառական կրթությունը ենթադրում է համակարգի, այլ ոչ թե երեխայի հարմարեցում:

Ներառական կրթությունը հաշմանդամության սոցիալական մոդելի յուրօրինակ ածանցյալն է: Այն ընդունում է, որ բոլոր երեխաները տարբեր են, իսկ դպրոցներն ու հանրակրթական համակարգը պետք է հարմարվեն բոլոր սովորողների մտավոր, հոգեկան և ֆիզիկական զարգացման կարիքներին և անհատական պահանջմունքներին: Սակայն ներառում չի նշանակում բոլորին ձուլելու կամ միատեսակ դարձնելու ձգտում: Այն ընդունում է, որ երեխաները սովորում են տարբեր արագությամբ, իսկ ուսուցիչներին անհրաժեշտ են հատուկ հմտություններ՝ ուսուցման գործընթացի ճկունությունն ապահովելու համար: Պարզապես երեխաներին անհրաժեշտ է հասկանալի, մատչելի դասավանդում: Իսկ դա իր հերթին ենթադրում է երեխայի առանձնահատկություններին, անհատական կրթական պահանջմունքներին, զարգացման տեմպերին, ընդունակություններին և կարողություններին համապատասխանող տարբեր մեթոդների օգտագործում:

Ներառումը հաշմանդամություն և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին հնարավորություն է տալիս կրթություն ստանալ իրենց համայնքներում և չմեկուսանալ ընտանիքներից: Համայնքից և ընտանիքից հեռու՝ հատուկ դպրոցներում երեխաներին տեղավորելը հակասում է ընտանիքի և համայնքի կյանքին մասնակցության նրանց իրավունքին: Ընտանիքից ու համայնքից հաշմանդամություն և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների բաժանումը հաճախ վկայում է հասարակության մեջ նման մարդկանց նկատմամբ գոյություն ունեցող նախապաշարումների մասին: Ներառական կրթությունը կարող է բարձրացնել կրթության որակը բոլորի համար: Ներառական կրթությունը կարող է կրթական պրակտիկայում փոփոխությունների կատալիզատոր հանդիսանալ, որը կհանգեցնի կրթության որակի բարձրացմանը: Հաշմանդամություն և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ներառումը հանրակրթական

դպրոցներ կստիպի ուսուցիչներին մշակել նոր՝ դեպի երեխան կողմնորոշված ուսուցման և ուսումնառության մեթոդներ, ապահովել մեծ թվով մասնակիցների ընդգրկվածություն ուսումնական գործընթացում: Դրանից օգուտ կստանան բոլոր երեխաները: Բազմաթիվ ուսուցիչներ կարծում են, որ կրթական հատուկ կարիքներով երեխաների ուսուցման համար իրենց անհրաժեշտ կլինեն «հատուկ հմտություններ»: Սակայն փորձը ցույց է տալիս, որ հատուկ կարիքներով երեխաներին հանրակրթական գործընթացի մեջ ներգրավելու համար ընդամենը անհրաժեշտ է որակյալ, հասկանալի և մատչելի դասավանդում, որը և նպաստում է աշակերտների ակտիվության բարձրացմանը: Սա այն է, ինչ պետք է անի ուսուցիչը՝ բոլոր երեխաներին որակյալ կրթություն տալու համար: Ներառական կրթության անցնում են բազմաթիվ երկրներ՝ կրթության համեմատաբար համեստ բյուջեով և տեխնիկական միջոցների փոքր ծավալով: Այս գործունեության դրական արդյունքներից են դասավանդման որակի բարձրացումն ու սովորողների ձեռքբերումները (այդ թվում նաև՝ կրթական գործընթացից դուրս մնացած և ցածր առաջադիմությամբ աշակերտների թվի նվազեցումը):

Գլուխ 1. Ներառական կրթությունը արդյունավետ դարձնելու նպատակով երաժշտության դասաժամին կիրառվող մանկավարժական տեխնոլոգիաները եւ մեթոդները

Ներառական կրթության պայմաններում երաժշտության ուսուցման գործընթացը անհնարին է պատկերացնել առանց ուսուցման մեթոդների: Ուսուցման մեթոդները ուսուցչի եւ աշակերտի համատեղ կրթական նպատակների իրականացմանն ուղղված գործունեության ձեւերն են: Մարդկությունը իր զարգացման ընթացքում ձեւավորել եւ կիրառել է ուսուցման մեթոդների անթիվ բազմազանություն: Ավելին՝ ամեն ուսուցիչ ուսումնասիրելով ուսուցման մեթոդների բազմազանությունը, ինքն է ամեն դեպքի համար ստեղծում ուսուցման իր մեթոդները, որոնք առավել են համապատասխանում իր եւ իր աշակերտների հնարավորություններին, կարողություններին ու հետաքրքրություններին:

Ըստ սովորողների ակտիվության աստիճանի երաժշտության ուսուցման մեթոդները բաժանվում են ակտիվ եւ պասսիվ տեսակի՝ պայմանավորված սովորողների՝ ուսումնական գործընթացին մասնակցելու աստիճանով:

Պասսիվ ուսուցման մեթոդի կիրառման ընթացքում սովորողները միայն լսում կամ նայում են երգը կամ երաժշտությունը (ձայնագրություն, տեսանյութ):

Ակտիվ ուսուցման մեթոդի կիրառման ընթացքում սովորողները ինքնուրույն երգում, պարում, նվագակցում եւ ստեղծագործում են:

Ներառական կրթության պայմաններում ուսուցիչը մեկ դասաժամի ընթացքում կարող է կիրառել ուսուցման մեթոդների 2 ձեւը միաժամանակ: Ինչու՞, որովհետեւ ներառական կրթության պայմաններում մեկ դասարանում սովորում են ծայրահեղ տարբեր ընդունակություններով եւ կարողություններով աշակերտներ եւ կան դասաժամեր, երբ խիստ ցածր կարողություններով երեխան չի կարող ակտիվ մասնակցություն ունենալ դասապրոցեսի ընթացքում: Հետեւաբաբար ուսուցիչը իր դասաժամի ընթացքում ուսուցման մեթոդները պետք է համադրի, փոփոխի, մշակի եւ ծրագրի այնպես, որ նույն դասարանում տարբեր կարողություններով սովորող աշակերտները ստանան իրենց կարողությունների համապատասխան գիտելիքներ եւ հմտություններ եւ արդյունքում չտուժվեն ոչ բարձր կարողություններով ոչ էլ կրթության առանձնահատուկ կարիք ունեցող երեխաները:

Արդյունավետ է համագործակցային մանկավարժական տեխնոլոգիան, որն իմաստավորվում է համատեղ գործունեության եւ կոլեկտիվ հաղորդակցման հիման վրա կազմակերպված ուսուցում: Այդպիսի հաղորդակցման ձեւեր կարող են լինել ունկնդրումները, զուգերգերը, խմբակային երգեցողությունը, աշակերտերի զույգերով կամ ավելի մեծ խմբով կազմակերպված աշխատանքը, երաժշտական բեմականացումները:

Համագործակցային մանկավարժական տեխնոլոգիայի կիրառումը կարելի է պայմանականորեն բաժանել 3 հիմնական փուլերի

1. ուսումնական նյութի նախապատրաստում

2. սաների նախապատրաստում համատեղ աշխատանքին

3. բուն ուսումնական աշխատանքի ընթացքը:

Իմ կարծիքով սա այն տեխնոլոգիաներից է, որի ներդրումը ներառական կրթություն կարեւոր պայման է հանդիսանում: Քանի որ ներառական կրթության ամբողջ նպատակը կրթության հատուկ կարիք ունեցող երեխաների ներգրավելն է ուսուցման գործընթացին եւ բացի այդ ինտեգրելը կոլեկտիվում՝ առանց որեւէ խտրականության: Իսկ այս տեխնոլոգիան հենց ինքը մի միջոց է, այս նպատակը իրականացնելու համար, քանի որ ինչպես նշվեց այս տեխնոլոգիայի հիմքում ընկած է համագործակցային, կոլեկտիվ աշխատանքի ձեւը եւ սա մի միջոց է որով կրթության առանձնահատուկ կարիք ունեցող երեխաները կարող են համատեղ աշխատել մյուս աշակերտների հետ: Հայտնի է, որ խմբակային կամ զույգերով աշխատանքը ավելի է մտերմացնում աշակերտներին, այսինքն՝ դա նպաստում է, որ կրթության հատուկ կարիք ունեցող երեխաները իրենց զգան կոլեկտիվի մի մաս եւ ունենան իրենց ուրույն դերը:

Օրինակ՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտը կարող է ունենալ խոսքի խանգարում, հետեւաբար կարող է դժվարանա երգել: Համընդհանուր ձեւավորման սկզբունքներին համապատասխան կազմակերպված դասապրոցեսում համադասարանցու հետ հանձնարարության կատարումը կարող է լինել մասնակցություն ապահովելու ձեւերից, բայց ուսուցիչը կարող է նաեւ կիրառել այլ ռազմավարություններ, օրինակ՝ երգը ուսուցանելու համար օգտագործել նվագակցություն, բոլոր սովորողներին իրար հետ հաղորդակցվելու համար սովորեցնել օգտվել տեխնոլոգիական միջոցներից կամ աշակերտներին սովորեցնել ժեստերով երգել:

Այս ամենը առավել լավ պատկերացնելու համար տեսնենք, թե իրականում այս տեխնոլոգիան ինչպես է կիրառվում ուսուցման գործընթացում.

Ուսումնական նյութի նախապատրաստական փուլում կատարվում է .

- երգի ընտրություն, դրա բաժանում հատվածների,
- լրացուցիչ նյութի ընտրություն,
- թիմային աշխատանքի տեսակի ընտրություն:

Աշակերտների նախապատրաստումը համատեղ աշխատանք կատարելու

կարողությունների ձեւավորման փուլում կատարվում է.

Ուրիշին լսելու կարողությունների ձեւավորում,

Ուրիշի կատարման մասին կարծիք արտահայտելու կարողությունների ձեւավորում, Սեփական կարծիք արտահայտելու եւ այն հիմնավորելու կարողությունների ձեւավորում, Անհրաժեշտ ինֆորմացիա հայթայթելու կարողությունների ձեւավորում,

Մտապատկերը երաժշտության միջոցով արտահայտելու եւ երաժշտությունը մտապատկեր դարձնելու կարողությունների ձեւավորում,

Վերլուծություն եւ համադրություն կատարելու կարողությունների ձեւավորում, Եզրահանգումներ կարատելու կարողությունների ձեւավորում եւ այլն:

Բուն ուսումնական աշխատանքի կատարման փուլում կարող է կազմակերպվել.

- Փոխադարձ ուսուցում ուսուցիչ – աշակերտ դերային խաղի տեսքով,
- Զուգերգ կատարելու ձեւով,
- Երգչախմբում հանդես գալու միջոցով:

Ուսուցման այս տեխնոլոգիայի կիրառումը նպաստում է.

- Ուսուցման արդյունավետության բարձրացմանը՝ ավելի լավ է յուրացվում եւ մտապահվում ուսումնական նյութը,
- Երգելու կարողունակության զարգացմանը,
- Խթանում է ուսման բարձր ճանաչողական դրդապատճառների ձեւավորմանը,
- Ինքնուրույն, առանց գիտելիքներ ձեռքբերելու կարողունակությունների ձեւավորմանն ու զարգացմանը,
- Ուրիշներին գնահատելու կարողունակությունների ձեւավորմանն ու զարգացմանը,
- Նպատակներ ձեւավորելու եւ դրանց իրականացնելու կարողունակությունների ձեւավորմանն ու զարգացմանը,
- Խմբակային երգեցողության կարողունակությունների ձեւավորմանն ու զարգացմանը,
- Վերլուծելու, համադրելու եւ ինքնուրույն եզրահանգումներկատարելու կարողունակությունների ձեւավորմանն ու զարգացմանը,
- Ստեղծագործական կարողունակությունների ձեւավորմանն ու զարգացմանը:

Ծրագրավորված ուսուցման տեխնոլոգիայի իմաստը կայանում է նրանում, որ ապահովում է հետադարձ կապ ուսուցման ողջ գործընթացում: Դրա համար ուսուցման նյութը բաժանվում է ոչ շատ մեծ, սակայն տրամաբանական ամբողջություն կազմող մի քանի մասերի, որոնք անվանվում են ուսուցման քայլեր: Այսպիսով ուսումնական նյութը սովորողին ներկայացվում է հատված առ հատված:

Ուսումնական ամեն քայլ, որն իր մեջ ամփոփում է ավարտուն ինֆորմացիոն հատված ներկայացվում է սովորողներին ինքնուրույն ուսումնասիրելու համար:

Հատվածը ուսումնասիրելուց հետո տրվում է այդ հատվածի հիմնական իմաստը

արտահայտող հարցը, որը պահանջում է այո կամ ոչ պատասխանը: Ճիշտ պատասխանելու դեպքում սովորողին հնարավորություն է տրվում անցնել ուսումնական հաջորդ քայլին:

Ծրագրավորված ուսուցման տեխնոլոգիայի կիրառման ներկայացված ուսումնական նյութը ապահովում է ամեն աշակերտի ամբողջ նյութի բոլոր հատվածների յուրացում եւ նկատի է առնում բոլոր սովորողների ուսման առանձնահատկություններն ու ուսման տեմպերը:

Այս տեխնոլոգիան իհարկե չի կարող չկիրառվել կրթության հատուկ կարիք ունեցող երեխաների ուսուցումն իրականացնելիս: Ծրագրավորված ուսուցման տեխնոլոգիան միջոց է, որով ուսուցիչը իր ուսուցանվող նյութը կարող է հասցնել դասարանի բոլոր աշակերտներին՝ անկախ նրանց կարողությունների, ընդունակությունների մակարդակից: Այստեղ ակնհայտ է ուսուցման անհատական մոտեցման սկզբունքը: Աշակերտները ուսուցանվող նյութը յուրացնում են <<քայլերով>> եւ եթե որեւէ <<քայլի>> վրա դժվարանում են, ապա չեն անցնում հաջորդ <<քայլին>> այնքան ժամանակ մինչեւ չեն յուրացնի նախորդը:

Ներառական կրթության պայմաններում այս տեխնոլոգիայի կիրառումը երաժշտության դասաժամին ենթադրում է հետեւյալ առավելությունները.

- Աշակերտները երգում են իրենց հարմար տեմպով՝ մեկն արագ, մյուսը ավելի դանդաղ,
- Ապահովում է մշտական հետադարձ կապ ուսուցչի հետ՝ յուրացրեց – չյուրացրեց այս մեղեդին, գիտի, թե չգիտի այն,
- Սովորողը չի ունենում բացթողումներ իր գիտելիքների մեջ:

Այսպիսով՝ ներառական կրթության պայմաններում երաժշտության դասաժամին

մանկավարժական տեխնոլոգիաների եւ մեթոդների ներդրման համար նախ եւ առաջ ուսուցիչները պետք է հիմնական գիտելիքներ ստանան հաշմանդամության ասպարեզից, որպեսզի նրանց վերաբերմունքը եւ աշխատանքի մեթոդները չխանգարեն հատուկ կարիքներով երեխաներին ուսումնական պլանի նկատմամբ հավասար մատչելիություն ունենալու:

Գլուխ 2. Ներառական կրթության առանձնահատկությունները երաժշտության պարապմունքին:

«Երաժշտությունը իրականության կերպարահնչյունային արտացոլումն է»: Բ. Ասաֆեւ

Մարդկության զարգացմանը զուգահեռ երաժշտությունը ձեռք է բերում հատուկ նշանակություն, երբ խոսք է գնում անհատի հոգեկան աշխարհի կամ մի ամբողջ մշակույթի մասին, երաժշտությունը հանդես է գալիս որպես այդ մշակույթը բնութագրող, բացահայտող եւ ներկայացնող խորհրդանիշ:

Երաժշտության կարեւորագույն առանձնահատկությունն այն է, որ այն մարդու զգայարանների վրա թողնում է անմիջական եւ ուժեղ ազդեցություն: Երաժշտությունը, ինչպես եւ արվեստի մյուս տեսակները, արտացոլում եւ պատկերում է մեր իրականությունը՝ շրջակա աշխարհը, մարդկանց, բնության երեւույթները: Երաժշտությունը առաջին հերթին հաղորդակցության միջոց է մարդկանց միջեւ, սերունդների միջեւ, հատուկ միջոց է ինքնաարտահայտվելու ինքն իրեն եւ մյուսներին հասկանալու համար: Իսկ առօրյա կյանքում երաժշտությունը ուղեկցում է մարդուն ամենուր, բացահայտում է նրա վերաբերմունքը շրջակա աշխարհի նկատմամբ, հարստացնում է նրա հոգեկան աշխարհը, օգնում է նրան ապրել, աշխատել եւ արարել: Երաժշտությունը, որպես ուսումնական առարկա, կարեւոր դեր ունի երեխայի՝ իբրեւ մարդ-անհատի ձեւավորման եւ զարգացման վրա տարբեր՝ գաղափարական, կամային,

Երաժշտական կրթությունը ուսումնական գործընթաց է, որն ուղղված է այն կարողունակությունների ձեւավորմանը, որոնց միջոցով զարգանում է ակտիվ, անհատական մոտիվացիայով սովորող, որը ընդունակ է ինքնակրթվել եւ ամբողջ կյանքում պահպանել հետաքրքրությունը բարձրակարգ երաժշտության եւ ընդհանրապես արվեստի նկատմամբ: Այն նպաստում է նաեւ սովորողի մտահորիզոնի ընդլայնմանը,երեւակայության, ստեղծագործական եւ վերլուծական մտածողության զարգացմանը, գեղագիտական եւ բարոյական չափանիշների, հայրենասիրական եւ մարդասիրական զգացումների ձեւավորմանը, ինչպես նաեւ կյանքի, շրջապատող աշխարհի նկատմամբ ստեղծագործական վերաբերմունքի դրսեւորմանը: Երաժշտության ուսուցիչը պետք հստակ նպատակներ դնի իր առջեւ:

- Դաստիարակել հետաքրքրություն, սեր եւ հուզազգացմունքային վերաբերմունք դեպի

երաժշտությունը:

- Ձեւավորել եւ զարգացնել երաժշտական ճաշակ եւ երաժշտության հետ

հաղորդակցվելու պահանջ:

- Ձեւավորել եւ ուղղորդել սովորողներին դեպի արդյունավետ

երաժշտաստեղծագործական գործունեություն՝ ունկնդրում, երգեցողություն, երաժշտառիթմական շարժում, իմպրովիզացիա եւ այլն:

- Բացահայտել եւ զարգացնել սովորողների երաժշտական ընդունակությունները, երգչային ձայնը, կատարողական, ունկնդրման, մեկնաբանման եւ սեփական կարծիք հայտնելու հմտությունները, երեւակայությունը եւ ստեղծագործական պատկերացումները, նպաստել ինքնաճանաչմանը եւ ինքնաարտահայտմանը:
- Սովորողի երաժշտական դաստիարակության հիմքում դնել ազգային, նաեւ համաշխարհային երաժշտությունը, զարգացնել ազգային երաժշտության գիտակ, ազգային ավանդույթները կրող, պահպանող ու սերունդներին փոխանցող սովորող:
- Արժեւորել երաժշտությունը եւ երաժշտական գործունեությունը, որպես մարդու հոգեկան հարստացման, մշակույթի եւ կյանքի աղբյուր: Դաստիարակել հոգեւոր եւ բարոյագեղագիտական բարձր արժեքներով օժտված մարդ, երաժշտության գիտակից եւ ակտիվ ունկնդիր:
- Շարունակել զարգացնել քննական մտածողությունը, սեփական հիմնավորված դիրքորոշումը արտահատելու, մյուսների կարծիքը լսելու, հարգելու, պատճառա-հետեւանքային կապերը վերլուծելու եւ որոշումներ կայացնեու հմտությունը:
- Ապահովել շարունակական կրթության եւ երաժշտության հետ հաղորդակցվելու հնարավորությունները բոլոր սովորողների համար:
- Գիտակցել եւ գնահատել երաժշտական ստեղծագործությունների հեղինակային իրավունք- ները, քննադատաբար վերաբերվել այն միջավայրին, որը ստեղծվել է

տեղեկատվական տեխնոլոգիաների եւ լրատվամիջոցների կողմից, ճշտել տեղեկության հավաստիությունը:

- Գիտակցել երաժշտական արվեստի դերը ժողովուրդների հասարակական, մշակութային եւ պատմական համատեքստում, հասկանալ նրա նշանակությունը, որպես միջմշակութային հաղորդակցության լեզվի:
- Դաստիարակել հատուկ վերաբերմունք՝ իր երկրի, մարզի, քաղաքի մշակութային օջախների գործունեության վերաբերյալ, համերգասրահներ, թատրոններ, թանգարաններ, պատկերասրահներ այցելելու ցանկություն եւ պահանջ:
- Մշակութային օջախներում դրսեւորել պատշաճ վարքագիծ, համապատասխան պահվածք, երաժշտություն ունկնդրելու մշակույթ:

Յուրաքանչյուր նպատակ հիմնվում է տվյալ դասարանին, տվյալ առարկային եւ երեխայի անհատական առանձնահատկություններին համապատասխանող ակնկալիքների վրա: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների դեպքում նպատակը գրանցվում է նրանց ԱՈԻՊ-ում: Պետք է հաշվի առնել յուրաքանչյուր երեխայի հնարավորությունները, կարողունակությունները, հետաքրքրությունները, որպեսզի նրան
յուրովի մասնակից դարձնի դասապրոցեսին: Երաժշտության ուսուցչից պահանջվում է շարունակական ինքնակրթություն, գիտելիքների, մասնագիտական կարողությունների վերանայում եւ վերամշակում՝ արդի պահանջներին համապատասխան:
Ներառական կրթությունը արդյունավետ դարձնելու նպատակով անհրաժեշտ է ուսուցման ընթացքում կիրառել մանկավարժական մի շարք տեխնոլոգիաներ եւ մեթոդներ, որոնք դասընթացը կդարձնեն առավել հետաքրքիր, նպատակային եւ դասապրոցեսին մասնակից կդարձնեն դասարանի բոլոր երեխաներին՝ առանց որեւէ խտրականությունների:
Նրանք բոլորովին մեղավոր չեն, որ տարբերվում են իրենց վարքով, ակադեմիական հնարավորություններով, ուշադրության պակասով, գերակտիվությամբ եւ արտաքին աշխարհի նկատմամբ անհաղորդությամբ: Նրանք բոլորն էլ տարբեր են իրենց կրթական առանձնահատուկ կարիքներով, բայց նրանց բոլորին միավորում է մի բան՝ նրանք բոլորն էլ կարիք ունեն անընդհատ ուշադրության եւ հատուկ վերաբերմունքի:
Հիմնականում բոլոր աշակերտներն էլ սիրով եմ մասնակցում <<Երաժշտություն>> առարկայի դասաժամերին:
Սովորողների երաժշտական գործունեության բոլոր տեսակի աշխատանքների հիմքում երաժշտության ակտիվ ընկալումն է, երաժշտություն լսելու եւ նրա մասին մտորելու կարողության զարգացումը:
Երաժշտություն առարկայի առաջարկվող գործունեության ձեւերն են.

- երաժշտական ստեղծագործության ունկնդրում եւ երաժշտության պատմություն, երգերի անհատական եւ խմբային կատարում,
- երաժշտառիթմական եւ պարային շարժում
- անհատական ստեղծագործում կամ իմպրովիզացիա (շարժումային եւ երգային,հանպատրաստից հորինում),
- ուսումնական էքսկուրսիաներ՝ թանգարաններ, համերգասրահներ եւ այլ մշակութայինօջախներ:

Երաժշտության ունկնդրումը եւ ընկալումը բարդ գործընթաց է, որովհետեւ այն կախված է յուրաքանչյուր անհատի ներքին զգացողությունից, որը բացահայտելը, ձեւավորելը եւ զարգացնելը բավականին դժվար է: Այն զարգացնում է ունկնդրելու կարողությունը, ուշադրությունը, վերլուծական ընդունակությունները եւ համեմատելու կարողությունը: Երաժշտության ունկնդրման միջոցով սովորողը ծանոթանում է նաեւ երաժշտության պատմությանը, ուսումնասիրում է ունկնդրվող ստեղծագործության ստեղծման պատմական ժամանակաշրջանը, կոմպոզիտորի ստեղծագործական գործունեության առանձնահատկությունները եւ այլն: Սովորողը հասկանում է, որ

ունկնդրել չի նշանակում միայն լսել, պետք է ներկայացնել, մեկնաբանել, վերլուծել, երաժշտությունից ստացած տպավորությունները, դրսեւորել հուզական արձագանք, ինքնուրույն կարծիք հայտնել, մենակ կամ խմբով ներկայացնել ուսումնասիրություններ, հետազոտական կամ նախագծային աշխատանքներ եւ այլն: Անհատական եւ խմբային երգեցողությունը երեխաների ամենասիրելի գործունեությանտեսակն է, որի ընթացքում զարգանում է նրա լսողությունը, ռիթմի ու լադի զգացողությունը: Երգեցողությունից է երեխան ստանում իր առաջին երաժշտական տպավորություններն ու զգայական ընկալումը: Սկսած առաջին դասերից՝ պետք է սովորեցնել երեխաներին ճիշտ երգեցողության կանոնները՝ ձայնի դրվածք, շնչառություն, բառերի հստակ արտասանություն, մաքուր ինտոնացիա եւ այլն: Խմբային երգեցողության միջոցով ձեւավորվում եւ զարգանում է սովորողների երգչային ձայնածավալը, ճիշտ շնչառությունը, ձայնակազմությունը, առոգանությունը, մաքուր ինտոնացիայով միաձայն
(ունիսոն) եւ երկձայն երգելու կարողությունը, անսամբլային զգացողությունը, որը հիմքեր է նախապատրաստում հետագայում խմբերգային երգեցողության համար:

Եզրակացություն

Երաժշտության ուսուցիչները պետք է ընդունեն այն փաստը, որ եթե բոլոր երեխաներն ունեն կրթության իրավունք, ապա դա իրենց՝ ուսուցիչների պարտականությունն է ուսուցանել բոլոր երեխաներին: Ուսուցիչներին այդ պատասխանատվությունը ստանձնելուն մղելը կարող է հաջողության բանալին լինել:
Երեխան, որի զարգացումը դժվարեցված է ֆիզիկական խնդրի առկայությամբ, ոչ թե թերզարգացած է քան իր նորմալ հասակակիցները, այլ երեխա է, որն ուրիշ կերպ է զարգացած, քան իր հասակակիցները: Այս մոտեցումը հնարավորություն է տալիս կարեւորել, որ խնդիր ունեցող երեխաները նույնպես համարվում են հասարակության լիիրավ անդամ:
Բոլոր երեխաներն էլ կարող են սովորել, երգել, ունկնդրել, կատարել երաժշտառիթմային
շարժումներ.պետք է ապահովել համապատասխան պայմաններ նրանց կրթության համար:
Ներառական կրթությանը պետք է օժանդակեն առարկայական ուսուցիչները, ծնողները,
առհասարակ, բոլոր նրանք, ում միջամտությունը կարող է այս կամ այն կերպ օգտակար լինել, որպեսզի ամեն մի երեխա կգտնի իր տեղն այդ համակարգում, եւ հնարավոր կլինի դպրոցում
սովորելը համատեղ ընտանիքի գրկում ապրելու հետ:
ԿԱՊԿՈՒ երեխաները պետք է ավելի ակտիվորեն ինտեգրվեն երաժշտության դասաժամերին եւ
արտադասարանական միջոցառումներին, երաժշտական կրթություն եւ գեղագիտական
դաստիարակություն ստանան բոլորի հետ միասին, զարգացնեն իրենց կարողունակությունները:
Պետք է ամրապնդել երաժշտություն առարկայի ուսուցիչների եւ ԿԱՊԿՈՒ ծնողների
համագործակցությունը:
Դպրոցում երեխաներին միմյանցից առանձնացնելու օրինական հիմքեր չկան: Երեխաները պետք
է սովորեն միասին, դա օգտակար կլինի բոլորի համար: Պետք չէ նրանց պաշտպանել միմյանցից:
Բոլոր երեխաներին պետք է կրթությունը, որը կօգնի նրանց հարաբերություններ հաստատել եւ պատրաստվել կյանքին հասարակության մեջ: Միայն ներառական մոտեցումը կարող է նվազեցնել
վախը եւ նպաստել բարեկամության, հարգանքի ու փոխըմբռնման հաստատմանը: Ներառական
կրթությունն օգնում է կանխել խտրականությունը երեխաների նկատմամբ՝ սատարելով նրանց
բոլորին՝ ինչպես հատուկ կարիքներ ունեցողներին, այնպես էլ չունեցողներին:
Ներառական կրթությունը նպաստում է հասարակության բոլոր անդամների
հնարավորությունների հավասարեցմանը՝ հաստատելով, նոր հարաբերություններ եւ
ստեղծագործական հնարավորություններ, որոնք անցյալում անհնար էին: Ներառական կրթությունը
մարդու իրավունք է, այն ապահովում է լավ կրթություն եւ սոցիալական առումով հիմնավորված է:
Կարեւոր է.

Կարեւոր է նկատի ունենալ, որ սովորողների գեղարվեստական հմտությունների զարգացումն ու արժեքային համակարգի ձեւավորումը դիտվում են որպես բոլոր թեմաների ուսուցմանն ուղեկցող խնդիրներ:
Երաժշտությունը կատարյալ միջոց է բոլոր երեխաներին եւ մասնավորապես՝ կրթական առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին ուսուցման գործընթացում ներառելու համար: Երաժշտական փորձառությունը կարող է նրանց համար արդյունավետ լինել լեզվական, ճանաչողական եւ շարժողական կարողությունների զարգացման համար՝ միաժամանակ նպաստավոր պայմաններ ստեղծելով սոցիալականացման համար:
- պետական աջակցության շարունակության ապահովումը սոցիալապես անապահով երեխաներին մշակութային մասնագիտական ուսուցման եւ գեղագիտական դաստիարակության ասպարեզում,
գեղարվեստական կրթության եւ գեղագիտական դաստիրակության իրականացման արդյունքում
մասնագիտությունների ձեռքբերումը, ստեղծագործական հմտությունների զարգացումը:
-երեխաների ժամանցը բազմաբովանդակ անցկացնելու նպատակով մշակութային միջոցառումների իրականացումը, մշակութային միջոցառումների եւ ազատ ժամանցի կազմակերպումը, որը
կապահովի երեխաների հետաքրքրությունների լայն շրջանակ, պայմաններ կստեղծի նրանց
գեղագիտական, հոգեւոր եւ ստեղծագործական կարողունակությունների զարգացման համար:
Արվեստը հասկանալու բանալին առօրեականի եւ գեղարվեստականի փոխհարաբերության

ընկալումն է, սովորողը արվեստի առարկաների դասավանդման ընթացքում իր ստացած գիտելիքների, ձեւավորված հմտությունների, վերաբերմունքի եւ արժեքների շնորհիվ պետք է հասկանա, ընկալի, թե ինչպես է առօրեականը արվեստի միջոցով դառնում կատարյալ, այսինքն՝ գեղարվեստական:

Գրականության ցանկ

1. «Ներառական կրթություն» ուսումնամեթոդական ուղեցույց, Երևան 2015
2. Ն.Մանուկյան, Վ. Ոսկանյան, Ա.Մուրադյան, Ծ. Մաթևոսյան «Ներառական կրթության իրականացման ուղեցույց»
3. Ներառական կրթության ռազմավարություններ>> Դասագիրք Մինեսոթայի համալսարան, Ամերիկայի Միացյալ Նահանգներ Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, 2018
4. http://krtutyun.wordpress.com
5. //escs.am/am/static/inclusiveeducation?s=edu
6. «ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ՉԱՓՈՐՈՇԻՉ ԵՎ ԾՐԱԳԻՐ